INTERNATIONAL ASSOCIATION OF JUDGES
UNION INTERNATIONALE DES MAGISTRATS
UNIÓN INTERNACIONAL DE MAGISTRADOS
INTERNATIONALE VEREINIGUNG DER RICHTER
UNIONE INTERNAZIONALE DEI MAGISTRATI

PALAZZO DI GIUSTIZIA - PIAZZA CAVOUR - 00193 ROMA - ITALY

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ 61-ՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մարաքեշ (Մարոկկո), 2018թ. հոկտեմբերի 14-18

Հռոմ, 2018 թվականի ապրիլի 24

ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հարգելի գործընկերներ,

1.Դատավորների միջազգային միության և Մարոկկոյի դատավորների միության անունից պատիվ ունեմ ձեր պատվիրակներին հրավիրելու 2018թ.-ի հոկտեմբերի 14-18-ին Մարաքեշում (Մարոկկո) կայանալիք Դատավորների միջազգային միության Կենտրոնական խորհրդի, Ուսումնասիրող չորս հանձնաժողովների, Տարածաշրջանային չորս խմբերի հանդիպումներին:

2.Հանդիպումները տեղի կունենան "*Palais des Congrès du Ministère de Bab Ighli*" հանդիպումների սրահներում:

Պատվիրակները կարող են համարներ ամրագրել MOVENPICK հյուրանոցում (www.movenpick.com) կամ, որպես այլընտրանք, SAVOY LE GRAND (www.savoylegrandhotel.com) հյուրանոցում:

Մարոկկոյի դատավորների միությունը հասանելի կդարձնի ավտոբուսների ամենօրյա ծառայությունները հյուրանոցներից դեպի հանդիպման վայր (Palais des Congrès du Ministère de Bab Ighli):

Ճանապարհի և կեցության ծախսերը կրում է մեկնող կողմը:

Մարոկկոյի դատավորների միությունը անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով կապահովի միաժամանակյա թարգմանություն, կապահովի հանդիպման բոլոր սրահների տրամադրումը, հոկտեմբերի 14-ին կիրականացնի ընդունելության խնջույք, ինչպես նաև հոկտեմբերի 17-ին (չորեքշաբթի)՝ հրաժեշտի ճաշկերույթ և շրջագայություն դեպի Մարաքեշի պատմական հուշարձաններ (հոկտեմբերի 16-ին):

3.Ակնկալվում է, որ պատվիրակները կժամանեն 2018 թվականի հոկտեմբերի 14-ին /կիրակի օրը/ (բացառությամբ Տարածաշրջանային հանդիպումներին մասնակցող պատվիրակների, ովքեր պետք է ժամանեն 2018թ.-ի հոկտեմբերի 13-ին /շաբաթ օրը/ և կմեկնեն հոկտեմբերի 19-ին /ուրբաթ օրը/:

Տրանսպորտային ընկերությունը կդիմավորի և հարմարավետ գներով կապահովի պատվիրակների տեղափոխումը օդանավակայանից դեպի հյուրանոցներ (նաև հյուրանոցներից դեպի օդանավակայան):

4.Հրավերին կցված է նախնական ծրագիրը: Ուղեկցող անձանց համար հատուկ ծրագիր պետք է մշակվի: Ուղեկցող անձինք պետք է վճարեն 200 եվրո:

5.Հոկտեմբերի 15-ին նախատեսված է անվճար շրջագայություն դեպի *Terres d'Amanar:*

6.Կազմակերպող միությունը կացության համար ներկայացնում է հետևյալ առաջարկները.

Հյուրանոց MOVENPICK

Սենյակի տեսակը	Արժեքը
Մեկտեղանոց	1500 դիրհամ /MAD/ (մոտավորապես 131 եվրո)
Երկտեղանոց	1650 դիրհամ /MAD/ (մոտավորապես 155 եվրո)

Նախաճաշը ներառված է սենյակի արժեքի մեջ:

Տուրիստական հարկ՝ 28.60 դիրհամ /MAD/ (մոտավորապես 2.50 եվրո) մեկ անձի և մեկ գիշերվա համար:

Հյուրանոց SAVOY LE GRAND

Սենյակի տեսակը	Արժեքը
Մեկտեղանոց կամ երկտեղանոց դելյուքս	1450 դիրհամ /MAD/ (մոտավորապես 127 եվրո)

Նախաճաշը ներառված է սենյակի արժեքի մեջ:

Տուրիստական հարկ՝ 28.60 դիրհամ /MAD/ (մոտավորապես 2.50 եվրո) մեկ անձի և մեկ գիշերվա համար:

2018 թվականի ապրիլի 16-ի դրությամբ փոխանակման արժեքն է՝
1 եվրո /11.76 դիրհամ /MAD/
1 դոլար /09.53 դիրհամ /MAD/

Երկու հյուրանոցների ամրագրման համար կոնտակտային անձ՝
պարոն Սաադ Քարիամ
էլեկտրոնային փոստ՝ Agence.fan.tours@gmail.com
հեռախոսահամար՝ +212.53720.32.72/73/74
ֆաքս՝ +212.537.20.32.75

7. ՀՀ դատավորների միությունից կարող է մասնակցել առավելագույնը 3 պատվիրակ:

8.Մասնակցության գրանցման թերթիկների ներկայացման վերջնաժամկետն է **2018 թվականի մայիսի 30-ը**: Գրանցման թերթիկները պետք է ուղարկվեն հետևյալ անձանց էլեկտրոնային փոստի հասցեներին.

պարոն Ա.Մեֆտահ էլեկտրոնային փոստ՝ congre.marrakech@gmail.com հեռախոսահամար՝ +212.694.924.073 ֆաքս՝ +212.522.37.98.75	**պարոն Ջակոմո Օբերտո** Դատավորների միջազգային միության գլխավոր քարտուղար հասցե՝ Palazzo di Giustizia Piazza Cavour - 00193 Roma, Italy հեռախոսահամար՝ +39 06 6883 2213

	ֆաքս՝ +39 06 687 11 95 էլեկտրոնային հասցե՝ secretariat@iaj-uim.org

9.Հյուրանոցների ամրագրումը պետք է կատարվի հետևյալ անձի միջոցով.
պարոն Սաադ Քարիամ
էլեկտրոնային փոստ՝ Agence.fan.tours@gmail.com
հեռախոսահամար՝ +212.53720.32.72/73/74
ֆաքս՝ +212.537.20.32.75

10.Պատվիրակներին խնդրում եմ հաշվի առնել նախատեսված վերջնաժամկետը (**2018 թվականի մայիսի 30**):

11.Յուրաքանչյուր անդամ միություն պետք է իր պատվիրակների ցուցակն ուղարկի (Կենտրոնական խորհրդին, Ուսումնասիրող հանձնաժողովներին և Տարածաշրջանային խմբերին) պարոն Ջակոմո Օբերտոյին և պարոն Ա.Մեֆտահին:

12. Մարաքեշում սպասվում է հաճելի եղանակ (25-30 աստիճան տաքություն):

Ձեզ եմ ուղարկում լավագույն մաղթանքներս և անհամբեր սպասում եմ բոլորիդ տեսնել Մարաքեշում:

Հարգանքով՝

Ջակոմո Օբերտո

Դատավորների միջազգային միության գլխավոր քարտուղար

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական խորհրդի և Ուսումնասիրող հանձնաժողովների հանդիպումներից բացի Մարաքեշում տեղի կունենան նաև հետևյալ հանդիպումները.

ա) հոկտեմբերի 13-ին՝ շաբաթ օրը կեսօրին, Նախագահական կոմիտեի հանդիպում,

բ) հոկտեմբերի 14-ին (կիրակի) Դատավորների միջազգային միության տարածաշրջանային խմբի՝ Դատավորների եվրոպական միության, Իբերոամերիկյան, Աֆրիկյան և Ասիական, Օկեանայի և Հյուսիսամերիկյան տարածաշրջանային խմբերի հանդիպումներ,

գ) հոկտեմբերի 14-ին՝ կիրակի օրը կեսօրին, Նախագահական կոմիտեի երկրորդ հանդիպում,

դ) հոկտեմբերի 17-ին (չորեքշաբթի) միջազգային համաժողով «Դատական անկախությունը և Դատավորի համընդհանուր խարտիայի ի կատար ածումը» թեմայով:

Տարածաշրջանային խմբերի հանդիպումներին մասնակցելու համար յուրաքանչյուր անդամ միությունից մեկ պատվիրակ պետք է ժամանի հոկտեմբերի 13-ին՝ շաբաթ օրը երեկոյան: Պատվիրակները մեկնելու են ուրբաթ օրը՝ հոկտեմբերի 19-ին:

Մարաքեշում Ուսումնասիրող հանձնաժողովները քննարկելու են հետևյալ թեմաները.

- «Իշխանության մյուս ճյուղերի, զանգվածային և սոցիալական լրատվամիջոցների կողմից անհարգալից կերպով դատավորների և դատական որոշումների նկատմամբ հանրային քննադատության միտումը» (Առաջին ուսումնասիրող հանձնաժողով),
- «Գործի արդյունավետ վարման ռազմավարություններ» (Երկրորդ ուսումնասիրող հանձնաժողով),
- «Վկաների նկատմամբ վերաբերմունքը, ներառյալ՝ անչափահաս վկաները, պաշտպանվող վկաները և սեռական բռնության ենթարկված տուժողները. դատավարական ընթացակարգերը. պարտադիր պատժամիջոցները» (Երրորդ ուսումնասիրող հանձնաժողով),
- «Փախստականների իրավունքները և պարտականությունները. ժամանակակից ստրկության վտանգը» (Չորրորդ ուսումնասիրող հանձնաժողով):

ԾՐԱԳԻՐ

(Մարոկկոյի դատավորների միության որոշման հիման վրա ենթակա է փոփոխման)

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ 61-ՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մարաքեշ, 2018 թվականի հոկտեմբերի 14-18

2018 թ.-ի հոկտեմբերի 13, շաբաթ

15.00-18.00	Նախագահական կոմիտեի հանդիպում

2018 թ.-ի հոկտեմբերի 14, կիրակի

09.00-16.00	Դատավորների եվրոպական միության հանդիպում
09.00-16.00	Իբերոամերիկյան տարածաշրջանային խմբի հանդիպում
09.00-16.00	Աֆրիկյան տարածաշրջանային խմբի հանդիպում
09.00-16.00	Ասիական, Հյուսիսամերիկյան և Օկեանիայի տարածաշրջանային խմբի հանդիպում
16.00-18.00	Նախագահական կոմիտեի հանդիպում (մաս երկրորդ)
09.00-17.00	Գիդի մասնակցությամբ ուղևորություն դեպի Մարաքեշի պատմական հուշարձաններ՝ նախատեսված ուղեկցող անձանց համար
19.00-22.00	Ընդունելության կոկտելային երեկույթ

2018 թ.-ի հոկտեմբերի 15, երկուշաբթի

09.00-09.45	Բացման արարողություն
10.00-13.00	Կենտրոնական խորհրդի հանդիպում (մաս առաջին)
15.00-18.00	1-4 Ուսումնասիրող հանձնաժողովների հանդիպում (մաս առաջին)
13.00-17.00	Ուղևորություն դեպի “Terres d’AMANAR”՝ նախատեսված ուղեկցող անձանց համար
Երեկո	Ազատ ժամանակ

2018 թ.-ի հոկտեմբերի 16, երեքշաբթի

09.00-13.00	Կենտրոնական խորհրդի հանդիպում (մաս երկրորդ)
15.30-18.00	Գիդի մասնակցությամբ ուղևորություն դեպի Մարաքեշի պատմական հուշարձաններ

2018 թ.-ի հոկտեմբերի 17, չորեքշաբթի

09.00-12.30	Միջազգային համաժողով «Դատական անկախությունը և Դատավորի համընդհանուր խարտիայի ի կատար ածումը» թեմայով
12.30-14.00	Ճաշ
15.00-18.00	1-4 Ուսումնասիրող հանձնաժողովների հանդիպում (մաս երկրորդ)
15.00-17.00	Նախագահական կոմիտեի հանդիպում (մաս երրորդ)
14.00-18.00	Ուղևորություն դեպի OURIKA

19.00-23.00 Հրաժեշտի ճաշկերույթ

2018 թ.-ի հոկտեմբերի 18, հինգշաբթի

09.00-13.00 Կենտրոնական խորհրդի հանդիպում

(մաս երրորդ)

09.00-13.00 Ուղեկցող անձանց համար ազատ ժամանակ

2018 թ.-ի հոկտեմբերի 19, ուրբաթ

Պատվիրակների մեկնում